ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 30.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/76

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/76 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.07.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը ս.թ. ապրիլի 26-ին՝ հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, էլեկտրոնային ձևով www.armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին է ներկայացրել իր հայտը հրավերի 9-րդ չափաբաժնով, որով նախատեսվում էր ՀՀ պաշտպանության

նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ձեռք բերել տեսապրոյեկտորներ (լրակազմ):

01.06.2018թ. www.armeps.am համակարգի միջոցով ուղարկված էլեկտրոնային նամակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ծանուցվել է, որ հայտերի գնահատման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս ճանաչվել է ընթացակարգի 9-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

05.06.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեով PDF ձևաչափով ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը)՝ բնօրինակից արտատպված, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ մեկ պայմանագիր՝ 9 499 980 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Ս.թ. հունիսի 22-ին, ժամը 14:57-ին www.armeps.am համակարգի միջոցով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է էլեկտրոնային նամակ դրան կցված ծանուցումով առ այն, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2018թ. ներկայացված N6.1 հավելվածում պարունակվող տվյալներում հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են հրավերի պահանջներին անհամապատասխանություններ, մասնավորապես, նշվել է, որ «...Ձեր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերում առաջարկվող ապրանքի լամպի հզորությունը (240 W (140 W - Eco Mode)), կոնտրաստի հարաբերակցությունը (12,000:1) և շահագործման հրահանգը (30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն) համարժեք չեն և չեն համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխան չափորոշիչներին...»:

Ընկերությունը նշել է, որ նամակում ներկայացված պահանջն ավելի քան մեծ զարմանք է առաջացրել, քանզի Ընկերության խորին համոզմամբ, նշված N6.1 հավելվածում

ներկայացված էր պարզ ու հասանելի բացատրություն գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ պահանջի առարկա դարձած հարցերի վերաբերյալ:

Ավելին, ուշադիր ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հարցադրումը Ընկերությունը եկել է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովը պարզապես լիովին անտեսել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2018թ. N6.1 հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակն և ներկա քննարկման հանված հարցերին վերաբերվող այլ տեղեկությունները:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն իրեն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 66-րդ կետով, այն է՝ «...Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր...» վերապահված իրավունքով՝ իր կողմից արդեն իսկ ներկայացված N 6.1 հավելվածը շտկելու հարկ չգտնելով ս.թ. հունիսի 25-ին, ժամը 11:07-ին «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեով հանձնաժողովի քարտուղար Տ. Աբրահամյանին՝ որպես լրացուցիչ տեղեկություն, ներկայացրել է պաշտոնական նամակ՝ մանրամասն թվարկելով, մատնանշելով, բացատրություններ ու պարզաբանումներ տալով հանձնաժողովի կողմից կատարված հարցադրմանը:

Նշված նամակում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրել է ավելի քան մանրամասն պարզաբանումներ և պարզ ու ակնհայտ ապացուցել, որ հանձնաժողովի կողմից բերված փաստարկները տեխնիկական առումով լիովին առոչինչ են և անհիմն:

Մասնավորապես, իր նամակում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն փաստել է հետևյալը՝ «գնահատող հանձնաժողովը պարզապես լիովին անտեսել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.06.2018թ. N6.1 հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակը և ներկա քննարկման հանված հարցերին վերաբերվող տեղեկություններն, ուստի ստիպված ենք դրանք կրկին ներկայացնել ստորև՝

<u>Համեմատական աղյուսակ</u>
(քաղվածք N6.1 հավելվածից)

	<u>Հրավերի պահանջ</u>	NEC ME401X թվային պրոյեկտոր

Պայծառություն՝ (հրավերի բնօրինակ արտահայտություն ՝ Product Highlights նվազագույնը)	4,000 ANSI Lumens	4,000 ANSI Lumens
Լամպի շահագործման ժամկետ՝ ժամ (հրավերի բնօրինակ արտահայտություն՝ Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում, էկո ռեժիմում, հատուկ էկո ռեժիմում՝ ժամ)	3,000 (Normal) / 4,000 (Eco) / 5,000 (Extreme Eco) Mode	4,000 (Bright) / 5,000 (Normal) / 9,000 (Eco) Mode
Լամպի հզորությունը	260 W	240 W (140 W - Eco Mode)
Կոնտրաստի հարաբերակցություն	17,000:1	12,000:1
Շահագործման հրահանգ՝	Ռուսերեն կամ հայերեն լեզուներով:	30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն
	մոխրագույնով նշված են տվյալ մոդելի առավելությունները:	

1) Ինչպես պարզ երևում է վերը ներկայացված համեմատական աղյուսակի քաղվածքից, առաջարկված NEC ME401X մակնիշի թվային պրոյեկտորի լամպն իրոք 20 W ավելի պակաս հզորություն ունի, քան հրավերով պահանջվող 260 W լամպը:

Սակայն այդ հանգամանքը թույլ է տալիս NEC ME401X պրոյեկտորին՝ տնտեսելով մոտ 10% էլեկտրաէներգիա, ոչ միայն արտացոլել հրավերով պահանջվող նույն 4000 լումեն լուսային հոսք, այլ նաև ապահովել անչափ ավելի երկար լամպի շահագործման ժամկետ (1000 – 4000 ժամ կախված աշխատանքային ռեժիմից), քան հրավերով պահանջված՝ 20 W ավելի բարձր սպառողական հզորություն ունեցող ու ծախսատար 260 W լամպը:

Արդյո՞ք ընթացակարգի հանձնաժողովի համար ի սկզբանե ակնհայտ չէր, որ, օրինակ՝ 10 W հզորություն ունեցող և երկարակյաց LED- լամպը, որն ապահովում է նույն լուսային հոսքն, ինչ և 60 W հզորություն ունեցող շիկացման լամպը, բոլոր տեսակետներից՝ միանշանակ, հանդիսանում է ավելի նախընտրելի տարբերակ, քան ծախսատար 60 W լամպը:

2) Արդյո՞ք ընթացակարգի հանձնաժողովի համար ի սկզբանե ակնհայտ չէր, որ պահանջված «Ռուսերեն կամ հայերեն լեզուներով» շահագործման հրահանգի փոխարեն

պատվիրատուին առաջարկված է շահագործման հրահանգի ավելի գերադասելի տարբերակ՝ 30 լեզուներով՝ ներառյալ ռուսերեն և անգլերեն, որի մեջ ներառված է նաև հրավերով պահանջվող լեզուներից մեկը՝ մասնավորապես, ռուսերենը:

Ընկերությունը նշել է նաև, որ զուտ ընթացակարգի հանձնաժողովի աշխատանքը դյուրին դառնելու համար նշված համեմատական աղյուսակում մոխրագույնով հատուկ ընդգծված էին առաջարկվող մակնիշի առավելությունները:

3) Եվ վերջինը, արդյո՞ք ընթացակարգի հանձնաժողովը չի նկատել N 6.1 հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակից հետո զետեղված ծանոթագրությունը, որը ստիպված ևս մեկ անգամ կրկնում են ստորև. այն է՝

ա) Մինչ օրս գոյություն չունի միջազգայնորեն ընդունված կոնտրաստի գործակցի (հարաբերությունը լրիվ սև/լրիվ սպիտակ դաշտերի միջև) չափման ստանդարտ և բնականաբար, ամեն մի արտադրող չափում է այդ գործակիցն իրեն հարմար մեթոդով:

Բնականաբար, էժան չինական կամ տայվանյան արտադրողներն (Acer, BenQ, Optoma և այլն) ավելի քան ակտիվ օգտագործում են այս հանգամանքն և տեղեկատվական բրոշյուրներում գրում ցանկացած թվեր:

Ընկերությունը նշել է նաև, որ թվային կինոթատրոններում շահագործվող DCI (Digital Cinema Initiative) ստանդարտի պրոֆեսիոնալ թվային լամպային պրոյեկտորները (որոնց արժեքը տասնյակ հազար դոլարներ են կազմում և որոնք արտադրվում են աշխարհի միայն 3 (երեք) ընկերությունների կողմից՝ Christie, Barco և NEC) կոնտրաստի գործակիցները չեն գերազանցում ընդամենը 2,200:1:

Ի վերջո, եթե հանձնաժողովը կասկածի տակ է առնում միջազգայնորեն ընդունված կոնտրաստի գործակցի չափման ստանդարտի ակնհայտ բացակայությունն, ապա նա կարող էր հեշտությամբ պարզել այդ հարցն, օգտագործելով թեկուզ համացանցում առկա տեղեկությունները:

բ) Համաձայն ամերիկյան Hewlett-Packard (HP) ընկերության հետազոտության արդյունքների, մարդու աչքը պարզապես չի կարող տարբերել 1,000:1-ից բարձր կոնտրաստի գործակիցը:

Ավելին, ի ապացույց վերոհիշյալ հետազոտությանը Ընկերությունը պատրաստ է ցանկացած պահի հանձնաժողովին ցուցադրել 2.5 անգամից ավել տարբեր կոնտրաստի գործակիցներ (16,000:1 և 6,000:1) ունեցող տարբեր պրոյեկտորների աշխատանքը»:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված նամակի 3-րդ կետը կարելի է լրացնել հետևյալով՝ արդյո՞ք գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ, որ օրինակ, եթե գոյություն չունենար միջազգայնորեն ընդունված ստանդարտ, որը փաստում է, որ 1 մետրն իր մեջ պարունակում է ոչ ավել, ոչ պակաս, ընդամենը 100 սանտիմետր, ապա ցանկացած ոք հնարավորություն կունենար կատարել չափումներն իրեն հարմար ձևով և այդ չափումների արդյունքներն ակնհայտորեն կտարբերվեին իրարից:

Ցավոք, մինչ օրս հենց այս վերը նկարագրված իրավիճակն է տիրում պատկեր արտացոլող սարքերի (պրոյեկտորներ, դիսփլեյներ/հեռուստացույցներ) բնագավառում, որտեղ գոյություն չունի միջազգայնորեն ընդունված կոնտրաստի գործակցի (հարաբերությունը լրիվ սև/լրիվ սպիտակ դաշտերի միջև) չափման ստանդարտ, և բնականաբար, ամեն մի արտադրող ելնելով զուտ մարքետինգային նկատառումներից չափում է այդ գործակիցն իրեն հարմար մեթոդով:

Ս.թ. հուլիսի 06-ին ժամը 17:41 -ին www.armeps.am համակարգի միջոցով ուղարկված էլեկտրոնային նամակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստանցել է ծանուցում և դրան կից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 07.06.2018թ. №8 և առ 06.07.2018թ. №9:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրել առ այն, որ՝

- գնահատող հանձնաժողովն անտեսելով ու արհամարհելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից, թե 05.06.2018թ. N6.1 հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակը և այլ տեղեկությունները, թե N 1/30-06/25 առ 25.06.2018թ. պաշտոնական նամակում ներկայացված փաստարկներն ու տրված ավելի քան հիմնավորված տեխնիկական առումով մանրամասն մասնագիտական բացատրություններն, առ 06.07.2018թ. №9 Արձանագրության թիվ 1.1 որոշման մեջ՝ փաստորեն կատարելով պաշտոնական կեղծիք, նշելով է, թե «...«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ընթացակարգի հրավերի պայմաններին

չհամապատասխանող, ուստի վերջինիս հայտը գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվել է...», մինչդեռ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, իր կողմից ներկայացված N 6.1 հավելվածը շտկելու հարկ չգտնելով, ս.թ. հունիսի 25-ին հանձնաժողովին ներկայացրել է որպես լրացուցիչ տեղեկություն միայն պաշտոնական նամակ, այլ ոչ թե N 6.1 հավելվածի շտկած տարբերակ:

- գնահատող հանձնաժողովի այս որոշման մեջ ավելի քան անհասկանալիորեն և զարմանալիորեն ամբողջովին բացակայում է որևէ բացատրություն, պարզաբանում կամ հիմնավորում այն մասին, թե կոնկրետ ինչ պատճառով է մերժվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը, ինչն ակհայտորեն հաստատում է այն, որ կոպտորեն խախտվել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ հոդվածն, այն է՝ «... ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

- անհասկանալի է, թե ինչո՞ւ ընթացակարգի հանձնաժողովը չի անդրադարձել խնդրի մանրամասն ուսումնասիրությանը և շուտափույթ որոշում կայացրել այն դեպքում, երբ համաձայն նույն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի՝ «... գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը...», սակայն գնահատող հանձնաժողովը այս դեպքում նույնիսկ չի էլ փորձել որևիցե նման քայլ ձեռնարկել և դիմել, օրինակ, առնվազն ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության տեխնիկական խորհրդատվությանը:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից Ընկերությունը գտնում է, որ ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով անցկացնելիս գնահատող հանձնաժողովը կոպտորեն խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, այն է՝ «2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում».

- 34-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը, այն է՝ «2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը»:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է Անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. թիվ 8 արձանագրության 1.1 կետով կայացված որոշումը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ից հրավերի 6.1 հավելվածի շտկված տարբերակը պահանջելու մասով, ինչպես նաև 06.07.2018թ. թիվ 9 արձանագրության 1.1-րդ և 1.2-րդ կետերով կայացված որոշումները՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի մասով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.07.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.07.2018թ. թիվ ԴՎԱ/2588 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և սահմանված կարգով Ընկերությունը (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով

ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերությունը օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացրել է իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համարժեք չի եղել հրավերով նշված տեխնիկական բնութագրի համապատասխան չափորոշիչներին, ինչից հետո, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին առաջարկվել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ընթացակարգի հրավերի պայմաններին չհամապատասխանող և վերջինիս հայտը գնահատվող հանձնաժողովի որոշմամբ մերժվել է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.07.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է բողոքի դեմ, հայտնելով, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի վերջինիս հայտը մեժվել է:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար նյութական միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

9. **Տեսապրոյեկտոր (լրակազմ)**

Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens
Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/
Լամպի տեսակը UHP x 1
Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ
Լամպի հզորությունը 260 W
Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ
օպտիկական խոշորացում 1.2x
թվային խոշորացում 2x
Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1
Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC
ինտերֆեյսներ
VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք)
ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W
աղմուկի մակարդակը 34 dB
Լրացուցիչ
Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ
Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ,
անհրաժեշտ միջոցներ՝
HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր,
VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ:
Պատի պրոյեկցիոն էկրան.
Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող:
Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով:
Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը:
Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

4. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 6.1 հավելվածով գնման առարկայի համար տեխնիկական բնութագրով սահմանված լամպի հզորություն, կոնտրաստի հարաբերակցություն, շահագործման հրահանգ չափորոշիչներով ներկայացրել է հետևյալ պարամետրերը.

(քաղվածք N6.1 հավելվածից)

	NEC ME401X թվային պրոյեկտոր
Լամպի հզորությունը	240 W (140 W - Eco Mode)
Կոնտրաստի հարաբերակցություն	12,000:1

Շահագործման հրահանգ	30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, մասնավորապես Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի լամպի հզորությունը, կոնտրաստի հարաբերակցությունը և շահագործման հրահանգը համարժեք չեն և չեն համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխան չափորոշիչներին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և 22.06.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված շտկումը գնահատվել է Ընթացակարգի հրավերի պայմաններին չհամապատասխանող:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 09.07.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.07.2018թ. թիվ ԴՎԱ/2588 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-

րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար նյութական միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

9. <u>Տեսապրոյեկտոր (լրակազմ)</u>

Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens
Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/
Լամպի տեսակը UHP x 1
Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, Էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ
<u>Լամպի հզորությունը 260 W</u>
Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ
օպտիկական խոշորացում 1.2x
թվային խոշորացում 2x
<u>Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1</u>
Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC
ինտերֆեյսներ
VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք)
ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W
աղմուկի մակարդակը 34 dB
Լրացուցիչ
Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ
Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ,
անհրաժեշտ միջոցներ՝
HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր,
VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ:
Պատի պրոյեկցիոն էկրան.

Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող:
Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով:
Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը:
Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

Հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացնում է հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում կամ գերազանցում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ 6-րդ

հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

Է«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով 9-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի համար տեխնիկական բնութագրով սահմանված լամպի հզորություն, կոնտրաստի հարաբերակցություն, շահագործման հրահանգ չափորոշիչներով ներկայացրել է հետևյալ պարամետրերը.

(քաղվածք N6.1 հավելվածից)

	Հրավերի պահանջ	Ընկերության ներկայացրած NEC ME401X թվային պրոյեկտոր
Լամպի հզորությունը	260 W	240 W (140 W - Eco Mode)
Կոնտրաստի հարաբերակցություն	17,000:1	12,000:1
Շահագործման հրահանգ	Ռուսերեն կամ հայերեն լեզուներով:	30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, մասնավորապես Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի լամպի հզորությունը, կոնտրաստի հարաբերակցությունը և շահագործման հրահանգը համարժեք չեն և չեն համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխան չափորոշիչներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և 22.06.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն առարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների դեմ և հիմնավորել է, որ Ընկերության կողմից

առաջարկվող պրոյեկտորն իր տեխնիկական բնութագրով և հատուկ հնարավորություններով բավարարում է և նույնիսկ գերազանցում է հրավերով նախատեսված պահանջները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված շտկումը գնահատվել է Ընթացակարգի հրավերի պայմաններին չհամապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 9-րդ չափաբաժնի մասով, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով ներկայացրած տեխնիկական բնութագիրը, հայտնում եմ հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 9-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռքբերել տեսապրոյեկտոր (լրակազմ): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, ***որ առաջարկվող ապրանքի լամպի հզորությունը, կոնտրաստի հարաբերակցությունը և շահագործման հրահանգը համարժեք չեն և չեն համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխան չափորոշիչներին:***

Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ ***լամպի հզորությունը պետք է լինի 260 W,*** (Ընկերությունը առաջարկել է 240 W (140 W - Eco Mode)), ***կոնտրաստի հարաբերակցությունը 17000:1*** (Ընկերությունը առաջարկել է 12000:1), ***շահագործման հրահանգը ռուսերեն կամ հայերեն լեզուներով*** (Ընկերությունը առաջարկել է 30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն):

Հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացնում է հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին: Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված

չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում կամ գերազանցում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր, որն ունի այլ տեխնիկական հատկանիշներ, քան նախատեսված է հրավերով, մասնավորապես հրավերով նախատեսվել է, որ գնման առարկայի լամպի հզորությունը պետք է լինի 260 W , իսկ Ընկերությունն առաջարկել է 240 W (140 W - Eco Mode), կոնտրաստի հարաբերակցությունը պետք է լինի 17000:1 իսկ Ընկերությունը առաջարկել է 12000:1:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին ***համապատասխանության*** վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ինչ վերաբերվում է գնահատող հանձնաժողովի կողմից որպես հայտի մերժման հիմք նշված այն հիմքին, թե Ընկերության կողմից ներկայացված շահագործման հրահանգը համարժեք չէ տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխան չափորոշիչներին (*հրավերով նախատեսվել է շահագործման հրահանգ ռուսերեն կամ հայերեն լեզուներով, Ընկերությունը առաջարկել է 30 լեզուներ, ներառյալ ռուսերեն և անգլերեն)*, գտնում եմ, որ նշված հիմքը հիմնավոր չէ, քանի որ հրավերով շահագործման հրահանգը պահանջվել է ռուսերեն կամ հայերեն, որն ենթադրում է, որ շահագործման հրահանգը նշված լեզուներից գոնե մեկով ներկայացնելու դեպքում այն կհապատասխանի

հրավերի պահանջներին, ***իսկ Ընկերությունը ներկայացրել է 30 լեզուներով, որի մեջ ներառված է նաև հրավերով պահանջվող լեզուներից ռուսերեն լեզուն:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ լամպի հզորության և կոնտրաստի հարաբերակցության մասով չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին: Ուստի գտնում եմ, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացված բողոքն սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ